## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«2019 թվականի համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման կամ չկանխատեսված ելքերի ֆինանսավորման մասին» և «Բելգիական» «ՆԱՅԿԵՌ» ՍՊԸ-ի տնօրեն Բրայն Վան Հերևեգեյի կողմից Գյումրու Բուլվարային թաղամասին կից նախկին զորամասի տարածքը օգտագործման նպատակով տրամադրելու վերաբերյալ ներկայացված գործարար ծրագրի առաջարկի մասին» հարցերի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման արդյունքում ստացված առարկությունների և առաջարկությունների**

| Հ/Հ | Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը | Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը | Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը | Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Վարտան Սիրմակես «Ֆրանկ Մյուլլեր» ընկերություն 05 հունիսի 2018թ. | Առաջարկում եմ տարածքը վերակառուցել որպես ռեկրեացիոն համալիր՝ հյուրանոցներով, այգիներով, բազմապրոֆիլ արտադրական համալիրով և այլն: | Ընդունվել է մասնակի | |
| 2. | Բրայն Վան Հերևեգեյ «ՆԱՅԿԵՌ» ՍՊԸ տնօրեն 2019թ. հունվար | Առաջարկում եմ Գյումրի համայնքին պատկանող Բուլվարային թաղամասին կից գտնվող նախկին զորամաս հանդիսացող տարածքում հիմնել զբոսաշրջային համալիր, ինչպես նաև արտադրամասեր՝ ապահովելով մինչև 150 նոր աշխատատեղ: | Ընդունվել է մասնակի | |
| 3. | «Ա և Վ ընկերներ» 05 փետրվարի 2019թ. | Առաջարկում ենք տարածքը վերակառուցել որպես հանգստի և ժամանցի գոտի, որն իր մեջ կներառի լճակներ, հեծանվային ուղի, բարեկարգ և լուսավոր ճեմուղի, ռեստորան, հյուրանոց, պտղատու ծառերով այգի՝ կաթիլային ոռոգման համակարգով, զիպլայն, էքստրեմալ սպորտի հարմարություններ, ձիարշավարան, բացօթյա կինոթատրոն, հրաձգարան, գարեջրատուն, դահուկային վազքուղի: Տարածքում առկա շինությունները կվերականգնվեն, կստեղծվի պտղատու այգուց առաջացած բերքի մթերման արտադրություն: | Ընդունվել է մասնակի | |
| 4. | Նարինե Գյադուկյան Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի տնօրեն | Առաջարկում եմ տարածքը վերակառուցել որպես վերականգնողական կենտրոն, որտեղ անվճար բուժօգնություն կստանան թմրամոլությամբ և հարբեցողությամբ տառապողները: | Ընդունվել է մասնակի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Կենտրոնը կծառայի ոչ թե բիզնես ծրագրի, այլ գթասրտության նպատակներին: Նախատեսվում է տարածքը հագեցնել անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Կենտրոնում բացի ֆիզիկական բժշկությունից կլինի հոգևոր բժշկություն, սոցիալական օգնություն: Կենտրոնում կաշխատեն հոգևորականներ, ովքեր աղոթքի, պահեցողության, խորհրդատվության միջոցով կօգնեն շահառուներին: | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ